ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԻՈԼԵՏՏԱ ՍԵՐԳԵՅԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

ԻԳ.00.02 – «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2020

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

МАНУКЯН ВИОЛЕТТА СЕРГЕЕВНА

ОСОБЕННОСТИ И ПЕРСПЕКТИВЫ ГОСУДАРСТВЕННОЙ СОСТОЯТЕЛЬНОСТИ НЕПРИЗНАННЫХ ГОСУДАРСТВ ПОСТСОВЕТСКОГО ПРОСТРАНСТВА

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23.00.02 – “Политические институты и процессы, международные отношения”

АВТОРЕФЕРАТ

Ереван 2020

Ատենախոսության թեման հաստատվել է Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ քաղաքական գիտությունների դոկտոր Տ. Թորոսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ քաղաքական գիտությունների դոկտոր Ա. Ալեքսանյան
քաղաքական գիտությունների թեկնածու Հ. Թորոսյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2020թ. նոյեմբերի 20-ին, ժամը 13.30-ին, ԵՊՀ-ում գործող ՀՀ ԲՈԿ-ի Քաղաքագիտություն 056 մասնագիտական խորհրդի նիստում:
Մասնագիտական խորհրդի հասցեն է՝ ՀՀ, Երևան-0025, Ալեք Մանուկյան 1:
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:
Սեղմագիրն առաքված է սեպտեմբերի 28-ին:
056 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոց. Վ. Ս. Պետրոսյան

Тема диссертации утверждена в Государственном университете имени В. Я. Брюсова.

Научный руководитель: доктор политических наук Т. Торосян

Официальные оппоненты: доктор политических наук А. Алексанян
кандидат политических наук А. Торосян

Ведущая организация: Ереванский государственный университет

Защита состоится 20 ноября 2020г. в 13.30 часов на заседании действующего в ЕГУ РА специализированного совета 056 Политические науки ВАК РА. Адрес: РА, Ереван 0025, ул. А. Манукяна 1.
С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕГУ.
Автореферат разослан 28 сентября.
Научный секретарь специализированного совета,
кандидат исторических наук, доцент В. С. Петросян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: ԽՍՀՄ փլուզումից հետո անկախություն հռչակեցին երկու տասնյակից ավելի երկրներ, որոնք ստիպված էին անցնել մարդկության պատմության ողջ ընթացքում եզակի գործընթաց՝ հետխորհրդային տրանսֆորմացիա: Այդ երկրների հասարակությունները պետականության ձևավորման ու կայացման ճանապարհին բախվեցին աննախադեպ մարտահրավերների, քանի որ կիրառելի չէին նախորդ տասնամյակների ոչ փորձը, ոչ գիտելիքները: Հետևաբար, այդ երկրների պարագայում հատկապես կարևոր են գիտական գործիքները, մոդելներն ու ցուցիչներն, որոնց միջոցով հնարավոր է գնահատել պետության կայացածության վիճակը, բացահայտել թերությունները՝ դրանք շտկելու նպատակով: Թեև անցած դարի 60-ականներից սկսել են մշակվել պետության կայացածության գնահատման հայեցակարգեր ու մոդելներ, այնուհանդերձ դրանք դեռևս լրամշակվում ու կատարելագործվում են:

Միաժամանակ, հետխորհրդային տրասնֆորմացիայի երկրների դեպքում այդ հայեցակարգերն ու մոդելները կիրառելու համար անհրաժեշտ է դրանք լրամշակել՝ հաշվի առնելով երկրների առանձնահատկությունները: Խնդիրն առավել բարդ է այդ խմբի այն պետությունների համար, որոնք դեռևս ճանաչված չեն, քանի որ առկա են կայացման լրացուցիչ բարդություններ (մասնավորապես, պայմանավորված միջազգային կապերի խիստ սահմանափակվածությամբ): Վերոնշյալ լրացուցիչ բարդությունները, ըստ էության, պայմանավորում են այդ պետությունների կայացման հետագծի առանձնահատկությունները և մարտահրավերները, որոնք համընդգրկուն ուսումնասիրության կարիք ունեն: Միաժամանակ, կարևոր են ոչ միայն այդ պետությունների կայացման առանձնահատկությունները, այլև կայացման հնարավորությունները և հեռանկարները: Թե՛ առանձնահատկությունների և մարտահրավերների, թե՛ հեռանկարների վերհանման համար անհրաժեշտ է համապատասխան գիտական գործիքների կիրառում: Այսպիսով, պետության կայացածության գնահատման գիտական գործիքների լրամշակման ու կատարելագործման խնդիրն արդիական է ոչ միայն ընդհանրապես, այլև հատկապես հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների, ու, մասնավորապես, չճանաչված պետությունների պետության կայացման գործընթացի գնահատման ու ճշգրտումների համար:

Ատենախոսության թեմայի մշակվածության աստիճանը: Քաղաքական գիտություններում պետությունների կայացածության խնդիրն ակտիվ քննարկումների առարկա է սկսած անցած դարի երկրորդ կեսից, և այդ խնդրի ուսումնասիրություններն ունեն կարևոր հայեցակարգային նշանակություն, քանզի դրանց ընթացքում ձևավորվում են պետության կայացման գործընթացների ընդհանուր սկզբունքները, էմպիրիկ մոդելները, ձևավորվում է ազգային կամ տիպաբանական առանձնահատկությունները որոշող գործոնների հանրագումարը:

Թեև այդ ընթացքում արդեն իսկ իրականացվել են պետությունների կայացածության էմպիրիկ ուսումնասիրություններ, սակայն պետությունների

կայացածության հայեցակարգը դեռևս մնում է ոչ բավարար հստակեցված, քանզի դրա հայեցակարգային և գործառութային ձևակերպումների վրա հետագա աշխատանքի կարիք կա: Դա բացատրվում է իմաստի ձևակերպման օբյեկտիվ դժվարություններով, որոնք կապված են այդ հասկացության բարդության և տեսակետների բազմազանության հետ:

«Պետության կայացածություն» հասկացության շուրջ տեսակետների բազմազանությունն ակներև է ստորև ներկայացվող աշխատանքների ուսումնասիրության արդյունքում: Վերջիններս, ըստ կայացածության առանձին բաղադրիչների ներկայացման իրենց ուղղվածության, կարելի է պայմանականորեն բաժանել հետևյալ խմբերի՝

- աշխատանքներ, որոնք ներկայացնում են պետականության սահմանումը և դրա երկու հատկորոշիչների՝ պետականության (statehood) և պետության կայացածության (stateness) բացահայտումը, ինչպես նաև տարածքային միավորների կազմավորման վրա կարգավիճակի ազդեցությունը, մասնավորապես, միջազգային գործընթացներին մասնակցությունը և այդ գործընթացներում այդ միավորների դերը[1]:
- աշխատանքներ, որոնք առաջարկում են պետությունների և ժողովուրդների ձևավորման գործընթացի համար հայեցակարգային սահմանումներ՝ ուշադրությունը կենտրոնացնելով կենտրոնի ու ծայրամասերի (periphery) և այլ սոցիալ-քաղաքական միավորների միջև փոխհարաբերությունների[2], պետական միավորների ձևավորման

---

[1] Nettl J., The State as a Conceptual Variable, *World politics.*, Vol. 20, N 4, Princeton, 1968, pp. 559-592; Tilly Ch., Reflections on the History of European State-Making, The Formation of National States in Western Europe, Ch. Tilly (ed.), Princeton University Press, Princeton, 1975; Tilly Ch., War Making and State Making as Organized Crime, Bringing the State Back in/ Ed. by Evans P., Rueschemeyer D., Skocpol T., Cambridge University Press, Cambridge, 1985; Spruyt H., The Sovereign State and its Competitors. An Analysis of System Change, Princeton University Press, Princeton, 1996; Lindberg S., Forms of State, Governance and Regime: Reconceptualising the Prospects for Democratic Consolidation in sub-Saharan Africa, *International Political Science Review* 22 (2), 2001, pp. 173-199; Lindberg S., Democratization by Elections: A New Mode of Transition?, John Hopkins University Press, Baltimore, 2009; Lehmbruch G., Consociational Democracy and Corporatism in Switzerland, *Publius: The journal of federalism*, Vol. 23, N 2, Oxford, 1993, pp. 43-60; Fukuyama F., State-Building: Governance and World Order in the 21st Century, Cornell University Press, Ithaca, 2004; Fukuyama F., Building Democracy After Conflict, "Stateness" First, *Journal of Democracy*, Vol. 16, No. 1, 2005, pp. 84-88; Bartolini S., Restructuring Europe: Centre Formation, System Building, and Political Structuring between the Nation State and the European Union, Oxford University Press, Oxford, 2005; Мельвиль А., Ильин М., Мелешкина Е. и др., Политический атлас современности: Опыт многомерного статистического анализа политических систем современных государств, МГИМО–Университет, Москва, 2007.

[2] Rokkan S., Valen H., The Mobilization of the Periphery, Approaches to the Study of Political Participation, Michelsen Institute, Bergen, 1962; Rokkan S., Cities, States and Nations: A Dimensional Model for the Study of Contrast in Development, Building states and nations: Method

այլընտրանքների[3] և ներկայացնելով ժողովուրդների ձևավորումը որպես ազգային ստանդարտիզացիայի և սոցիալական մոբիլիզացիայի հանրագումար[4]:

- աշխատանքներ, որոնք անդրադառնում են պետության կայացման ռազմավարական տեսակներին՝ կենտրոնանալով էթնո-քաղաքական նույնականացման քաղաքականության և դրա տարբերակների վրա[5]:
- աշխատանքներ, որոնք անդրադառնում են համայնքների քաղաքական կառուցման գործընթացի հայեցակարգմանը և ձևայնացմանը, սոցիալ-քաղաքական բաժանման հայեցակարգերին, որոնք իրենցից ներկայացնում են առավել առանցքային հասարակական տարաձայնությունները, որոնք ստացել են ինստիտուցիոնալ արտացոլում քաղաքական մակարդակում և կազմավորում են իշխանության և հասարակության համակարգը՝ որպես պետության քաղաքական «մարմին»[6]:
- պատմական ինստիտուցիոնալիզմի կողմնակիցների աշխատանքները, որոնցում վերլուծության է ենթարկվում ստեղծված ինստիտուցիոնալ ժառանգության ազդեցությունը պետության զարգացման վրա,

---

and data resources, Vol. 1., Sage, Beverly Hills, 1973, pp. 13-38; Rokkan S., The Center-Periphery Polarity, Center Periphery Structures in Europe: an ISSC Workbook in Comparative analysis, Campus Verlag, Frankfurt am Main,1987; Rokkan S., Territorial Structures in Western Europe: An Overview and Possible Model, Center Periphery Structures in Europe: An ISSC Workbook in Comparative analysis., Campus Verlag, Frankfurt am Main, 1987; Rokkan S., Territories, Centres, and Peripheries: Toward a Geoethnic-Geoeconomic-Geopolitical Model of Differentiation within Western Europe, Centre and Periphery. Spatial Variation in Politics, ed. by J. Gottmann, Sage Focus Editions, Beverly Hills, London, 1980.

[3] Moore B., Social Origins of Dictatorship and Democracy, Beacon, Boston, 1968.

[4]Deutsch K., Social Mobilization and Political Development, *American political science review*, Vol. 55, N 3, 1961, pp. 493-514.

[5] Linz J., Stepen A., Problems of Democratic Transition and Consolidation: Southern Europe, South America and Postcommunist Europe, John Hopkins university, Baltimore, London, 1996; Rae H., State Identities and the Homogenisation of Peoples, Cambridge University Press, Cambridge, 2002; Brubaker R., Nationalism Reframed: Nationhood and the National Question in the New Europe, Cambridge University Press, Cambridge, 1996.

[6] Lijphart A., Thinking about Democracy: Power Sharing and Majority Rule in Theory and Practice, Routledge, New York, 2007; Lijphart A., Democracy in Plural Societies: A Comparative Exploration, Yale University Press, New Heaven, London, 1977; Lijphart A., Consociational Democracy, World Politics, Vol. 21, No. 2, 1969, pp. 207-225; Daalder H., The Consociational Democracy Theme, *World politics*, Vol. 26, N 4, 1974, pp. 604-621; Lehmbruch G., Consociational Democracy and Corporatism in Switzerland, *Publius: The journal of federalism*, Vol. 23, N 2, Oxford, 1993, pp. 43-60; Lipset S., Rokkan S., Cleavage Structures, Party Systems and Voter Alignments: An Introduction, Party Systems and Voter Alignments: Cross-National Perspectives, The Free Press, New York, 1967; Caramani D., The Nationalization of Politics: The Formation of National Electorates and Party Systems in Western Europe, Cambridge University Press, Cambridge, New York, 2004.

կայսրությունների փլուզման հետևանքով ձևավորված պետությունների ձևավորման առանձնահատկությունները, ինչպես նաև պատմության ընթացքում ծագած ծայրահեղ իրավիճակները և դրանց ազդեցությունն ինստիտուցիոնալ որոշումներ ընդունող դերակատարների վրա[7]:

- աշխատանքներ, որոնց շրջանակներում փորձ է արվել ներկայացնել պետության կայացածության հարաբերականորեն համընդգրկուն ուսումնասիրություն, սակայն գործնականում առկա են համակողմանիության հետ խնդիրներ[8]:

Այսպիսով, ակնհայտ է, որ պետության կայացածության խնդրին նվիրված ուսումնասիրությունները կենտրոնանում են պետության կայացածության հիմնախնդրի միայն առանձին բաղադրիչների սահմանման վրա և լրացուցիչ ընդհանրացնող հայեցակարգային աշխատանքների և համընդգրկուն էմպիրիկ համեմատությունների անհրաժեշտություն կա:

Ինչ վերաբերում է պետության կայացածության գնահատման մոդելներին, ապա վերջիններս հարկ է բաժանել առանձին ոլորտների գնահատման[9] և ինտեգրալ գնահատման ցուցիչների[10]: Սակայն բոլոր գոյություն

---

[7] Skocpol T., States and Social Revolutions: A Comparative Analysis of France, Russia and China, Cambridge University Press, Cambridge, 1979; Ziblatt D., Structuring the State: the Formation of Italy and Germany and the Puzzle of Federalism, Princeton University Press, Princeton, New Jersey, 2006; After Empire: Multiethnic Societies and Nation-Building. The Soviet Union, and the Russian, Ottoman and Habsburg Empires, Ed. By Barkey K., von Hagen M., Westview press, Oxford, 1997; Pierson P., Increasing Returns, Path Dependence, and the Study of Politics, *American political science review*, Vol. 94, N 2, 2000, pp. 251-267; Pierson P., Politics in Time: History, Institutions and Social Analysis, Princeton University Press, Princeton, New Jersey, 2004; Nationalism and Empire: The Habsburg Empire and the Soviet Union/ Ed. by Rudolph R., Good F., St. Martin's Press, New York, 1992; Collier R., Collier D., Shaping the Political Arena, Princeton University Press, Princeton, 1991; States and Development. Historical Antecedents of Stagnation and Advance, Ed. by Lange M., Rueschemeyer D., Palgrave Macmillan, New York, 2005; Mahoney J., The Legacies of Liberalism: Path Dependence and Political Regimes in Central America, Johns Hopkins University Press, Baltimore, 2001.

[8] Fritz V., State-Building: A Comparative Study of Ukraine, Lithuania, Belarus, and Russia, Central European University Press, Budapest, New York, 2007; Bartolini S., The Political Mobilization of the European Left, 1860–1980: The Class Cleavage, Cambridge University Press, Cambridge, 2000.

[9] Տես Worldwide Governance Indicators, http://info.worldbank.org/governance/wgi/index.aspx#home, (11.06.2019); Human Development Index (HDI), http://hdr.undp.org/en /content/human-development-index-hdi, (11.06.2019); Freedom in the World, https://freedomhouse.org/ report-types/freedom-world, (11.07.2019); Polity IV Project: Political Regime Characteristics and Transitions, 1800-2010, http://www.systemicpeace.org/polity/polity4.htm, (11.07.2019); Index of Economic Freedom, The Heritage Foundation in Partnership with WALL STREET JOURNAL, https://www.heritage.org/index/, (12.07.2019).

[10] Տես Fragile States Index, https://fragilestatesindex.org/, (15.07.2019); Мельвиль А., Ильин М., Мелешкина Е. и др., Политический атлас современности: Опыт многомерного статистического анализа политических систем современных государств, МГИМО–Университет, Москва, 2007; Стукал Д., Хавенсон Т., Моделирование государственной состоятельности постсоциалистических стран, *ПОЛИТЕКС*, № 1, 2012, с. 238-264; Мельвиль

ունեցող թե՛ առանձին ոլորտների գնահատման, թե՛ ինտեգրալ գնահատման ցուցիչները, բացի Freedom House-ի կողմից ներկայացվող «Ազատության վարկանիշն աշխարհում» ցուցչի[11], չեն ներառում չճանաչված պետությունների գնահատումը, ըստ այդմ, հարկ է ուսումնասիրել վերջիններիս գնահատման հնարավորությունները և առանձնահատկությունները:

Այնուամենայնիվ, նկատվում է չճանաչված պետությունների նկատմամբ աճող հետաքրքրություն, որն արտահայտվում է դեռևս միայն գիտական հոդվածներում:, մասնավորապես, մի շարք գիտական հոդվածներում փորձեր են արվում ուսումնասիրել և, ինչն ավելի կարևոր է, գնահատել չճանաչված պետություններն այդ հոդվածներում առաջադրված զանազան չափորոշիչների շրջանակներում[12]:

Հայրենական գրականության շրջանակներում հատկանշական են «Ժողովրդավարության մակարդակի ինդեքսի»[13] և «Քաղաքական համակարգի կայունության ինդեքսի»[14] միջոցով Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ուկրաինայի և Մոլդովայի համապատասխանաբար ժողովրդավարության և քաղաքական կայունության մակարդակների համեմատական վերլուծությունը ներկայացնող աշխատանքները: Հայաստանում պետության կայացածության առանձին ոլորտների գնահատման մոդելներին անդրադարձել է Կ. Վերանյանը[15]: Ընդ որում

Α., Стукал Д., Условия демократии и пределы демократизации. Факторы режимных изменений в посткоммунистических странах: опыт сравнительного и многомерного статистического анализа, Полис, № 3, 2011, с. 164-183; Мельвиль А., Стукал Д., Миронюк М., Траектории режимных трансформаций и типы государственной состоятельности, Полис, № 2, 2012, с. 8-30.

[11] Freedom in the World , https://freedomhouse.org/report-types/freedom-world, (11.07.2019) .

[12] Токарев А., Сравнительный анализ сецессий на посткоммунистическом пространстве: квантификация факторов влияния, *Полис. Политические исследования*, N4, 2017, с. 106-117; Семенко И., Лапкин В., Пантин В., Типология этно-политической конфликтности: методологические вызовы “большой теории”, *Полис. Политические ицследования*, N 6, 2016, с. 69-94; O’Loughlin J., Kolosov V., Building Identities in post-Soviet “de facto states” cultural and political icons in Nagorno-Karabakh, South Ossetia, Transdniestria and Abkhazia, *Euasian Geography and Economics,* Vol. 58, N 6, 2017, pp. 691-715; Bakke K., Linke A., O’Loughlin J., Toal G., Dynamics of state-building agter war: External-internal relations in Eurasian de facto states, Political geography, 63, 2018, pp. 159-173; O’Loughlin J., Kolossov V., Toal G., Inside the post-Soviet de facto states: a comparison of attitudes in Abkhazia, Nagorny Karabakh, South Ossetia and Transnistria, Eurasian Geography and Economics, Vol 55, N5, 2014, pp. 423-456.

[13] Comparative Analysis of the Index of Democracy Level: Armenia, Georgia, Azerbaijan, Russia, Belarus, Kazakhstan, Ukraine and Moldova, ed. by Arusyak Aleksanyan, YSU press, Yerevan, 2015 .

[14] Political Stability of Newly Independent Countries under Conditions of Modernization (Armenia, Georgia, Azerbaijan, Russia, Belarus, Kazakhstan, Kyrgyzstan, Ukraine and Moldova), ed. by Arusyak Aleksanyan, YSU press, Yerevan, 2018 .

[15] Վերանյան Կ., Հայաստանի Հանրապետությունը միջազգային վարկանիշային համակարգում, Նորավանք, Երևան, 2010; Վերանյան Կ., «Խաղաղասեր երկրներ» 2010թ. Վարկանիշային զեկույցը Vision of Humanity. «Global Peace Index»,

ուսումնասիրության առարկան ոչ թե ընդհանուր խնդրի դիտարկումն է, ցուցչի/ցուցիչների վերլուծությունն է, այլ այդ հետազոտությունների արդյունքների հանրագումարում Հայաստանի զբաղեցրած տեղի ներկայացումը, ինչպես նաև Հայաստանի արձանագրած միավորային արդյունքների համեմատությունը հարևան կամ հետխորհրդային մյուս պետությունների հետ: Չկայացած պետությունների կայացման խնդիրներին անդրադառնալու տեսակետից առանձնահատուկ ուշադրության է արժանի «Քաղաքական հետազոտությունների ինստիտուտի» կողմից ներկայացված «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. Պետականության կայացումը դարերի սահմանագծում» աշխատությունը, որն ընդգրկում է ԼՂՀ պետականության կառուցման քաղաքական և իրավական ասպեկտների համալիր վերլուծությունը[16]:

---

http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=4914&sphrase_id=21723, (15.11.2018); Վերանյան Կ., Համաշխարհային տնտեսական ֆորում. «Համաշխարհային առևտրի խթանում 2010 թ.» զեկույցը, http://www.noravank.am /arm/articles/ detail. php? ELEMENT_ID=4925&sphrase_id=21723, (15.11.2018); Վերանյան Կ., Ժողովրդավարության վարկանիշը 2008-2010թթ. «The Economist Group»-ի զեկույցները, http://www.noravank.am /arm/articles/detail. php? ELEMENT_ID=5814&sphrase_id=21723, (15.11.2018); Վերանյան Կ., ՀՀ-ն Հարավային Կովկասի ամենախաղաղասեր երկիրն է «Խաղաղասեր երկրներ» 2011թ. Վարկանիշային զեկույցը, http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=5799&sphrase_id= 21723, (15.11.2018); Վերանյան Կ., ՄԱԿ Զարգացման ծրագիր. Մարդկային զարգացման ինդեքսը 2011թ. ,http://www.noravank.am /arm/articles/ detail.php?ELEMENT_ID=6113&sphrase_id=21723, (15.11.2018); Վերանյան Կ., ՀՀ Կոռուպցիայի ընկալման ինդեքսը 2011թ. Transparency International. Corruption Perception Index 2011, http://www.noravank.am/arm /articles/detail.php?ELEMENT_ID=6185&sphrase_id= 21713, (15.11.2018); Վերանյան Կ., ՀՀ միջազգային վարկանիշը. «Տեղեկատվական-հեռահաղորդակցային տեխնոլոգիաների զարգացածության ինդեքսը» և «Գործարարության համար լավագույն երկրները» 2011Թ., «Գլոբուս էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն», թիվ 6, 2011, http://www.noravank.am /arm/articles/detail.php?ELEMENT_ID=6202&sphrase_id=21713, (15.11.2018); Վերանյան Կ., «Տնտեսական ազատության ինդեքսը» 2000-2012թթ. The Heritage Foundation, The Wall Street Journal. "Index of Economic Freedom", «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 3 (24), 2012, http://www.noravank.am/arm/articles /detail.php?ELEMENT_ID=6417&sphrase_id=21713, (15.11.2018); Վերանյան Կ., Freedom House. «Ազատության վարկանիշն աշխարհում» 2011-2012թթ. զեկույցները, «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 4 (25), 2012, http://www.noravank.am/arm/articles/ detail.php? ELEMENT_ID=6447&sphrase_id=21713, (15.11.2018); Վերանյան Կ., Համաշխարհային տնտեսական ֆորում. Գլոբալ մրցունակության 2012-2013թթ. զեկույցը, «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 11, 2012, http://www.noravank.am/arm/articles /detail.php?ELEMENT_ID=6767&sphrase_id=21713, (15.11.2018); Վերանյան Կ., ՀՀ-ն գործարարության վարկանիշով ԱՊՀ տարածքի առաջատարն է, «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 1, 2013, http://www.noravank.am /arm/articles /detail.php ?ELEMENT_ID=6885&sphrase_id=21912, (15.11.2016):

[16] Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. Պետականության կայացումը դարերի սահմանագծում, Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ, Երևան, 2009:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է ուսումնասիրել չճանաչված պետությունների կայացման հնարավորությունները և առանձնահատկությունները, մշակել մոդել՝ վերջիններիս կայացման մարտահրավերները և հեռանկարները բացահայտելու համար:

Նշված նպատակի իրագործման համար ատենախոսությունում առաջադրվել են հետևյալ հետազոտական խնդիրները՝

- ուսումնասիրել պետությունների կայացածության հասկացությունը, հիմնական մոտեցումները և գնահատման մոդելներն ու մեթոդները,
- բացահայտել ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա ձևավորված պետությունների կայացման մակարդակի և միջազգային ճանաչման միջև կապը/կապի բացակայությունը,
- վերլուծել հետկոնֆլիկտային փուլում պետության կառուցման գործընթացի առանձնահատկությունները և մարտահրավերները,
- ներկայացնել չճանաչված պետությունների կայացածության գնահատման հնարավորությունները և խնդիրները,
- մշակել թե՛ ճանաչված, թե՛ չճանաչված պետությունների կայացածության գնահատման համար կիրառելի ինտեգրալ մոդել,
- փորձարկել մշակված մոդելն (Խաղաղության ցուցիչը)՝ այն կիրառելով Արցախի Հանրապետության կայացածության գնահատման համար,
- ներկայացնել Աբխազիայի, Հարավային Օսիայի, Մերձդնեստրի և Արցախի կայացածության քանակական գնատականներն ըստ Խաղաղության ցուցչի և որակական գնահատումն ըստ քաղաքական, տնտեսական, սոցիալական և անվտանգության ոլորտների:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը հետխորհրդային տարածքի չճանաչված պետություններն են՝ որպես ժամանակակից պետությունների հատուկ տարատեսակ: Հետազոտության առարկան չճանաչված պետությունների կայացածման առանձնահատկություններն ու հեռանկարներն են:

Ատենախոսության տեսամեթոդական հիմքը: «Պետության կայացածություն» հասկացության շուրջ տեսակետների բազմազանության պայմաններում ատենախոսությունում թեմային նվիրված գրականության ներկայացումը և վերլուծությունը կատարվել է կոդավորման (coding) մեթոդով՝ ըստ կայացածության առանձին բաղադրիչների ներկայացման ուղղվածության խմբաբաժանման: Պետության կայացածության և միջազգային ճանաչման կապի բացահայտման շրջանակներում օգտագործվել է ժամանակային շարքերի վերլուծության (time series analysis), հետագծային վերլուծության (path analysis), առանձին դեպքի ուսումնասիրության (case study), երկակի (binary) և խաչաձև-ժամանակագրական (cross-temporal) համեմատության մեթոդները: Հետկոնֆլիկտային փուլում պետության կառուցման գործընթացի ուսումնասիրության շրջանակներում կոգնիտիվ արտապատկերման (cognitive mapping) մեթոդի միջոցով բացահայտվել է մարդկային գործոնի (տվյալ դեպքում՝ իշխանությունների) ազդեցությունը պետության կառուցման գործընթացի վրա:

«Խաղաղության ցուցիչում» օգտագործվել է որակական և քանակական տվյալների հանրագումարային վերլուծության մեթոդը, որը հնարավոր է կատարել 3 տեսակ տեղեկատվության հավաքագրման արդյունքում՝ 1. պաշտոնական տեղեկատվության և վիճակագրական տվյալներ, պետական կայքէջերում տեղ գտած զեկույցներ, 2. գիտական հոդվածների ու մենագրություններ, 3. կատարած սեփական փորձագիտական հետազոտության արդյունքներ: Ցուցիչում ներկայացվում է գնահատման և արդյունքների մշակման փուլային եռաստիճան համակարգ հետևյալ փուլերով՝ 1. առանձին դեպքի ուսումնասիրություն, 2. կլաստերային վերլուծություն՝ ըստ տարածաշրջանների (տարածաշրջանում ընդգրկված և՛ ճանաչված, և՛ չճանաչված պետությունների համախումբը), նաև առանձին կլաստերային վերլուծություն միայն չճանաչված պետությունների շրջանակներում, 3. գլոբալ համեմատություն: Ցուցիչի օգնությամբ պետությունների կայացածության մակարդակի գնահատման համար օգտագործվել են միատարր և երկկողմանի (univariate and bivariate analysis), բազմակի հետընթացի (multiple regression analysis), ժամանակային շարքերի (time series analysis), իրադարձությունների պատմական (event history analysis), գործոնների (factor analysis), հետագծային (path analysis), շեղումների (analysis of variance (ANOVA)), համատեքստի (content) վերլուծության մեթոդները:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսությունում որպես գիտական նորույթ առկա են մոտեցումներ, գաղափարներ, տեսական ընդհանրացումներ և առաջարկություններ, որոնցից առավել կարևոր են հետևյալները.

- Պետության կառուցման և կայացման գործընթացները պայմանավորող գործոնների համընդգրկուն ուսումնասիրության արդյունքում առաջարկվում է «պետության կայացածություն» եզրույթի հայեցակարգային և գործառութային սահմանում, որը, ըստ էության, լուծում է եզրույթի ոչ բավարար հստակեցված լինելու խնդիրը: Պետության կայացածությունը սահմանվում է որպես պետության իր հիմնական գործառույթներն իրականացնելու, ինչպես նաև միջազգային հանրության լիիրավ անդամ դառնալու և իրավասուբյեկտության հատկանիշներով օժտված լինելու կարողություն: Առաջարկվող սահմանման շրջանակներում պետականությունը/իրավասուբյեկտությունը դիտարկվում է որպես պետության կայացածության անքակտելի մաս և, ըստ էության, որպես պետության զարգացումը և կայացումը երաշխավորող հիմք և շարժիչ ուժ:
- «Պետությունների իրավունքների և պարտականությունների մասին» Մոնտեվիդեոյի կոնվենցիան դիտարկվում է որպես ինքնորոշման իրավունքը և ինքնորոշված պետության ճանաչումը կապող փաստաթուղթ: Կոնվենցիայի Հոդված 1-ի չորս չափանիշների կապը պետության անկախության ճանաչման հետ կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ՝ պետությունը ճանաչվում է, եթե այն հռչակվել է կոնկրետ տարածքում (բ չափանիշ) ապրող բնակչության կամքի ազատ արտահայտմամբ (ա չափանիշ), այդ տարածքն ամբողջությամբ վերահսկվում է կառավարության կողմից (գ չափանիշ), որը կարողանում է հարաբերություններ հաստատել

այլ պետությունների հետ (դ չափանիշ)։ Վերջինն անհրաժեշտ է, քանի որ ճանաչման վերջին ակորդը՝ ՄԱԿ-ին անդամակցության հարցի քննարկման ժամանակ ճանաչվող պետության օգտին քվեարկությունը, հնարավոր է միայն այդ պետությունների համապատասխան քաղաքական դիրքորոշման առկայության դեպքում։ Կոնվենցիայի նման մեկնաբանությունը վերացնում է այդ փաստաթղթի թվացյալ հակասությունը ինքնորոշման իրավունքի հետ. առաջին հայացքից կարող է թվալ, թե Կոնվենցիայում սահմանված չափանիշները լրացուցիչ պայմաններ են առաջադրում ինքնորոշման իրավունքի կիրառման համար, մինչդեռ վերջինս ունի միջազգային իրավունքի նորմի բարձրագույն կարգավիճակ և վերոհիշյալ երեք հիմնարար փաստաթղթերը որևէ սահմանափակում չեն նախատեսում։ Առաջարկվող մեկնաբանությունը ցույց է տալիս, որ որևէ հակասություն չկա միջազգային իրավունքի այդ հիմնարար փաստաթղթերի միջև։ Ավելին, Մոնտեվիդեոյի կոնվենցիան նախանշում է այն ուղին, որը պետության հռչակումից տանում է դեպի ճանաչում։

- Պետության կայացածության մակարդակի և ճանաչման միջև կապի ուսումնասիրության շրջանակներում ապացուցվել է, որ «չճանաչված» կարգավիճակն առաջ է բերում մարտահրավերների մի ամբողջ համախումբ պետության կայացածության բոլոր ոլորտների համար. չճանաչված պետությունները, պայմանավորված որևէ տեսակի միջազգային հարաբերությունների խիստ սահմանափակվածությամբ, սկսում են պետության կառուցման և կայացման գործընթացները մարտահրավերների այնպիսի համախմբի հետ զուգընթաց, ինչպիսիք են զինված հակամարտությունից հետո ողջ պետության վերակառուցումը և վերականգնումը, գլոբալիզացիայի խորացումը, և հետխորհրդային պետությունների դեպքում այդ մարտահրավերները համալրվում են նաև հետխորհրդային տրանսֆորմացիայի մարտահրավերներով։ Վերջնական իրավական կարգավիճակի շնորհման հետաձգումն այդ պետություններին մշտապես պահում է դյուրաբեկության և/կամ ձախողման սպառնալիքի տակ. անկախ իրենց զարգացման հետագծից, միջազգային հարաբերությունների սահմանափակվածությունը կամ բացակայությունը վաղ թե ուշ կհանգեցնի պետության կայացածության որևէ ոլորտի կամ, գուցե, միանգամից մի քանի ոլորտների (քանի որ նրանք սերտորեն փոխկապակցված են) դյուրաբեկությանը։
- Հետկոնֆլիկտային փուլում պետության կառուցման առանձնահատկությունների ձևակերպում, որոնք էականորեն տարբերում են այդ գործընթացը հետկոնֆլիկտային փուլով չանցած պետությունների կառուցման գործընթացներից։ Առանձնացվել են այդ՝ առանձնահատկությունների վրա ազդող գործոնների չորս խումբ՝ հակամարտության հետևանքներ, կոնֆլիկտային փուլի մարտահրավերներ, ինքնիշխան պետականության կառուցման փորձի և գիտելիքների պակաս, չճանաչվածության հետևանքներ։ Վերոնշյալ գործոնների ազդեցության ներքո առաջացած առանձնահատկությունների թվում հատուկ ուադրության

են արժանի ա) պետության անկարողությունը (թե՛ ռեսուրսների, թե՛ փորձի, գիտելիքի պակասի առումով) կատարել իր հիմնական գործառույթները՝ պայմանավորված թե՛ հետկոնֆլիկտային փուլով, թե՛ միջազգային հարաբերությունների խիստ սահմանափակվածությամբ առաջացած մարտահրավերներով, բ) իշխանության դժկամությունը՝ կատարելու իր հիմնական գործառույթները և շտկելու ստեղծված բարդ իրավիճակը (հատկապես անտեսելով բնակչության ծանր կացությունը թեթևացնելու խնդիրը)՝ արդյունքում օգտվելով ստեղծված իրավիճակից սեփական շահերի բավարարման համար:

- Պետության կառուցման և կայացման գործընթացների վրա ազդող առանցքային գործառույթների և նախապայմանների համընդգրկուն ուսումնասիրության արդյունքում մշակվել է ինտեգրալ գնահատման մոդել՝ «Խաղաղության ցուցիչը», որը հնարավորություն կտա մեկ մոդելի շրջանակներում իրականացնել և՛ ճանաչված, և՛ չճանաչված պետությունների կայացածության գնահատումը: Ուսումնասիրելով արդեն գոյություն ունեցող գնահատման մոդելները և առանձնացնելով գոյություն ունեցող թերությունները և բացթողումները՝ մշակվել է գնահատման այնպիսի մեթոդաբանություն, որը թույլ է տալիս առավելագույնս օբյեկտիվ իրականացնել յուրաքանչյուր պետության կայացածության գնահատումը:
- «Խաղաղության ցուցչի» օգնությամբ գնահատվել են Արցախի, Աբխազիայի, Հարավային Օսիայի և Մերձդնեստրի կայացածության մակարդակները և վերհանվել են յուրաքանչյուր պետությունում առանցքային հիմնախնդիրները, որոնք հանդիսանում են մնացյալ խնդիրների փաստացի ելակետը: Առաջարկվել են տվյալ խնդրների լուծման հնարավորություններ՝ առաջնահերթ կենտրոնանալով այդ պետություններում ապրող բնակչությանը վիճակը թեթևացնելու վրա:

Ատենախոսության գիտատեսական և կիրառական նշանակությունը: Ատենախոսության գիտատեսական նշանակությունն է «պետության կայացածություն» եզրույթի հայեցակարգային և գործառութային եզրույթի, ինչպես նաև պետության կայացածության մակարդակի և միջազգային ճանաչման կապի ներկայացումը, որը կդյուրացնի գիտական շրջանակներում «պետության կայացածություն» հասկացության հետագա կիրառումը:

Ատենախոսության կիրառական նշանակությունն է պետության կայացածությունը գնահատող ինտեգրալ մոդելի՝ «Խաղաղության ցուցիչի» ներկայացումը, որը ձևավորվել է այն սկզբունքով, որ կիրառելի լինի թե՛ ճանաչված, թե՛ չճանաչված պետությունների կայացածության մակարդակների գնահատման համար՝ նպատակ ունենալով ներկայացնել նաև արդեն գոյություն ունեցող ցուցիչների կողմից անտեսված չճանաչված պետությունների գնահատումը: Վերջիններս պետության կայացման գործընթացում հանդիպող մարտահրավերներից զատ ստիպված են հաղթահարել նաև չճանաչված կարգավիճակով պայմանավորված մարտահրավերներ: Մոդելը թույլ է տալիս միաժամանակ արձանագրել պետության կայացածության բոլոր ոլորտներում և՛ առաջընթացները, և՛ հետընթացները, ինչն էլ թե՛ պետություններին, թե՛

միջազգային հանրությանը հնարավորություն է տալիս ուշադրությունը սևեռել խնդրահարույց ոլորտների վրա և օպերատիվ հանձն առնել արձանագրված խնդիրների լուծումը, ինչը թույլ կտա պայքարել անվտանգության սպառնալիքների և ապակայունացման դեմ՝ նպաստելով խաղաղության հաստատմանը (այստեղից էլ մոդելի անվանումը)։ Մշակված մոդելը կարող է կիրառում ստանալ ինչպես գիտահետազոտական, այնպես էլ պետական կառավարման ոլորտներում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսությունը քննարկվել է Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի (ՎՊՀ) ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդու իրավունքների, ժողովրդավարության և քաղաքացիտության ամբիոնում: Ատենախոսության հիմնադրույթներն անցել են լիարժեք փորձաքննություն՝ հետազոտության հիմնական դրույթները և արդյունքները քննարկվել են շուրջ 15 միջազգային գիտաժողովներում և հրապարակվել են թվով 10 գիտական հոդվածներում: Ատենախոսության տարբեր կառուցամասերը պարբերաբար ներկայացվել են հրապարակային պաշտպանության Erasmus+ և Volkswagen Stiftung-ի «EUCACIS – The EU, Central Asia and the Caucasus” ասպիրանտական ծրագրի շրջանակներում Գերմանիայի համալսարանների դասախոսներից, CIFE և IeP գիտահետազոտական կենտրոնների մասնագետներից կազմված խորհրդում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության մեջ օգտագործված է 343 աղբյուր, իսկ ատենախոսության ընդհանուր ծավալը 247 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ ներկայացված է խնդրի արդիականությունը, գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը, աշխատանքի գիտատեսական և կիրառական նշանակությունը:

Առաջին գլուխը՝ վերնագրված **«Պետության կայացածության հատկանիշները և գնահատման մեթոդները»**, բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ **«Հետխորհրդային պետությունների կայացման հիմնախնդիրների առանձնահատկություններն ու դրանց լուծման հնարավորությունները»** վերնագրով, քննարկվել են ԽՍՀՄ փլուզմամբ մեկնարկած և մինչ այսօր շարունակվող ինստիտուտների համընդգրկուն վերակառուցում, ինստիտուցիոնալ գործիքների վերաբաշխում և դրանց բնույթի, կառուցվածքի ու բաշխման արմատական փոփոխություն պահանջող բազմաշերտ անցումային շրջանի ժողովրդավարության «երրորդ ալիքի» տեսության շրջանակներում ներկայացնելու թերությունները, ինչպես նաև ուսումնասիրության վեկտորը ժողովրդավարության գործընթացից դեպի պետության կայացման հիմնախնդիրներն ուղղելու անհրաժեշտությունը:

Երկրորդ ենթագլխում՝ **«Պետության կայացածություն հասկացությունը. հիմնական մոտեցումները»** վերնագրով, ներկայացվել են «պետության

կայացածություն» հասկացության ոչ բավարար հստակեցվածության խնդիրները, դրա հայեցակարգային և գործառութային ձևակերպումների վրա հետագա աշխատանքի կարիքը: Հասկացության շուրջ տեսակետների բազմազանության վերլուծությունը կատարվել է կոդավորման (coding) մեթոդով՝ ըստ կայացածության առանձին բաղադրիչների ներկայացման ուղղվածության խմբաբաժանման:

Երրորդ՝ **«Պետության կայացածության գնահատման մեթոդները»** ենթագլխում ներկայացվել են պետության կայացածության առանձին ոլորտների գնահատման մոդելների և ինտեգրալ մոդելների կիրառման առանձնահատկությունները, թերություններն ու առավելությունները: Ուսումնասիրվել են պետության կայացածության հաշվարկման համար վերոնշյալ գնահատման մեթոդների օգտագործման մարտահրավերները և հնարավորությունները:

Երկրորդ գլխում՝ վերնագրված **«Ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա ձևավորված պետությունների կայացման խնդիրն ու կապը միջազգային ճանաչման հետ»,** իրականացվել է պետության կայացածության և պետությունների միջազգային ճանաչման գործընթացների և վերջիններիս կապի կամ դրա բացակայության վերլուծությունը՝ փուլային տրամաբանությամբ: Որպես հիմք է ընդունվել այն փաստը, որ յուրաքանչյուր պետության բնականոն էվոլյուցիան պետք է ընթանա հետևյալ փուլերով՝ անկախության հռչակում, ինստիտուցիոնալ և անվտանգային զարգացմանն ուղղված աշխատանք՝ պետության կառուցում, պետության միջազգային ճանաչում (անդամակցություն ՄԱԿ-ին)՝ որպես պետության միջազգային իրավասուբեկտության պարտադիր պայման, և պետության կայացում: Ըստ այդմ, խնդրի ուսումնասիրությունն իրականացվել է հետևյալ փուլերով՝ 1.ազգերի ինքնորոշման սկզբունքի հիման վրա ձևավորված պետությունների միջազգային ճանաչման իրավական պահանջների դիտարկում հետևյալ 2 փուլերով՝ ժամանակակից միջազգային իրավունքի մեջ ազգերի ինքնորոշման սկզբունքի կարգավիճակի, ընդգրկման և բովանդակության ուսումնասիրություն, ազգերի ինքնորոշման սկզբունքի հիման վրա ձևավորված պետությունների ճանաչման միջազգային գործընթացների դիտարկում, միջազգային իրավունքի մեջ ամրագրված պետության իրավասուբյեկտությունը որոշող հատկանիշների ուսումնասիրություն, 2.ազգերի ինքնորոշման սկզբունքի հիման վրա ձևավորված պետությունների միջազգային ճանաչման քաղաքական գործոնի դիտարկում, մասնավորապես, պետությունների միջազգային ճանաչման ժամանակ ճանաչման իրավական բաղադրիչի ազդեցության կամ դրա բացակայության դիտարկում, 3.պետության կայացածություն հասկացության և դրա գնահատման հնարավորությունների ներկայացում, 4.պետության կայացածության և ճանաչվածության կապի կամ դրա բացակայության դիտարկում:

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«Ազգերի ինքնորոշման իրավունքի կարգավիճակի, ընդգրկումը և բովանդակությունը ժամանակակից միջազգային իրավունքում»** վերնագրով, քննարկվել են ազգերի ինքնորոշման իրավունքի՝ քաղաքական սկզբունքից համապարտադիր, անվերապահ իրավական նորմի

փոխակերպման հետագիծը, ինչպես նաև ժամանակակից միջազգային իրավունքում ազգերի ինքնորոշման իրավունքի ընդգրկման և կարգավիճակի դիտարկման համար բացառիկ նշանակություն ունեցող ՄԱԿ հիմնարար փաստաթղթերը և ԵԱՀԿ Հելսինկյան ակտը: Ներկայացվել է միջազգային իրավունքում այս նորմի՝ jus cogens և erga omnes իրավական կարգավիճակը՝ դիտարկելով Միջազգային պայմանագրերի մասին Վիեննայի կոնվենցիայում ամրագրված դրույթները և ՄԱԿ Արդարադատության միջազգային դատարանի որոշումները:

Երկրորդ ենթագլխում՝ վերնագրված **«Ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա ձևավորված պետությունների միջազգային ճանաչման գործընթացները»** քննարկվել է պետության ճանաչման գործընթացը՝ ներկայացված երկսյուն համակարգի միջոցով, որի հիմնասյուներն են Մոնտեվիդեոյի կոնվենցիայում ամրագրված միջազգային իրավունքի տեսանկյունից պետության իրավասուբյեկտությունը որոշող հատկանիշները և jus cogens նորմերի անխախտելիությունը: Վերլուծվել է պետության ճանաչման գործընթացը միջազգային իրավական ժառանգությունը երկու ճակատների բաժանած երկարատև բանավեճի շրջանակներում. արդյո՞ք ճանաչվածությունը էական պահանջ է պետականության համար, ինչպես պնդում են սահմանադիր դպրոցի ներկայացուցիչները, թե՞ արդեն գոյություն ունեցող փաստացի կարգավիճակի հաստատում, ինչպես հավաստում են հռչակագրային դպրոցի ներկայացուցիչները: Ուսումնասիրվել են աշխարհում մի շարք պետությունների ճանաչման գործընթացները՝ շեշտադրելով հատկապես Հարավսլավիայի փլուզումումից հետո ընկած ժամանակահատվածը:

Երրորդ՝ **«Պետության իրավասուբյեկտությունը որոշող հատկանիշները: Մոնտեվիդեոյի կոնվենցիա»** ենթագլխում, վերլուծվել են Մոնտեվիդեոյի կոնվենցիայում ամրագրված միջազգային իրավունքի տեսանկյունից պետության իրավասուբյեկտությունը որոշող հատկանիշները: Վերջիններիս վերլուծությունն անչափ կարևոր է ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա ձևավորված պետությունների կայացածության և կառուցման գործընթացների գնահատման համար՝ հանդիսանալով, ըստ էության, վերջիններիս հիմքը: Միաժամանակ, նմանատիպ վերլուծությունը նաև թույլ է տալիս արձանագրված արդյունքների հիման վրա գնահատել վերոնշյալ պետությունների միջազգային ճանաչում ստանալու հնարավորությունները: Դիտարկվել են նաև Մոնտեվիդեոյի Կոնվենցիայում ամրագրված միջազգային իրավունքի տեսանկյունից պետության իրավասուբյեկտությունը որոշող հատկանիշներն Արցախի և Կոսովոյի դեպքերի համար:

Չորրորդ ենթագլխում՝ վերնագրված **«Հարավային Կովկասի հակամարտությունների համեմատական վերլուծություն»** անդրադարձ է կատարվել իրավական մոտեցումնե՞ր, թե՞ քաղաքական շահեր երկընտրանքային հարցադրմանը: Վերոնշյալ հարցադրման դիտարկման միջոցով վեր է հանվել միջազգային հարաբերություններում կիրառվող մեխանիզմների և դրանց կիրառման հնարավորությունների ու արդյունավետության վերաբերյալ ամբողջական պատկերը:

Երրորդ՝ **«Պետության կառուցման առանձնահատկությունները հետկոնֆլիկտային միջավայրում»** գլխում ներկայացվել են հետկոնֆլիկտային փուլին բնորոշ առանձնահատկությունների ազդեցությունը պետության կառուցման գործընթացի վրա: Այդ առանձնահատկությունները բաժանվել են չորս խմբի՝ հակամարտության հետևանքներ, հետկոնֆլիկտային փուլի մարտահրավերներ, ինքնիշխան պետականության կառուցման փորձի ու գիտելիքների պակաս, չճանաչվածության հետևանքներ: Իրականացվել է հետկոնֆլիկտային փուլում ծագած մարտահրավերների ու պետության կառուցումը պայմանավորող գործոնների և դրանց վրա ազդող առանձնահատկությունների համապարփակ ուսումնասիրություն:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում՝ վերնագրված **«Պետության կառուցման պատմական և կառուցվածքային ժառանգությունը»**, քննարկվել են պետության կառուցման գործընթացի վրա պատմական և կառուցվածքային ժառանգության ազդեցությունը՝ հատուկ ուշադրություն սևեռելով հետկոնֆլիկտային և դյուրաբեկ պետությունների դեպքերի վրա: Վերլուծվել են պետության կառուցման պատմական և կառուցվածքային ժառանգության գործոնները՝ բաժանվելով հետևյալ խմբերի՝ պետության կազմավորման պատմություն, հասարակության կառուցվածքային բաժանումներ, զինված հակամարտության պատմություն, կառուցվածքային տարրեր, տնտեսական զարգացածության մակարդակ և աղքատության ցուցանիշ, ինստիտուցիոնալ ժառանգություն:

Երկրորդ՝ **«Պետության կառուցման խնդիրն արդի գլոբալ միջավայրում»** ենթագլխում ներկայացվել են արդի գլոբալ միջավայրում պետության կառուցման պայմաններն ու մարտահրավերներն, որոնք կայացման նպատակ հետապնդող, հատկապես՝ հետկոնֆլիկտային պետությունների համար բարդ մարտահրավերներ են առաջադրում: Քննարկվել է նաև արդի գլոբալ միջավայրի ազդեցությունը միջազգային դերակատարների ներգրավվածության ծավալի և աստիճանի վրա:

Երրորդ գլխի երրորդ՝ **«Պետության կառուցումը պայմանավորող կարևորագույն գործոնները»** ենթագլխում վերլուծվել են պետության կառուցումը պայմանավորող գործոնները: Յուրաքանչյուր գործոնի վերլուծությունն ուղեկցվել է առանցքային դերակատարների և «կենտրոն-ծայրամասեր» հարաբերությունների հնարավոր դրսևորումների դիտարկմամբ՝ հաշվի առնելով հետկոնֆլիկտային պետության կառուցման առանձնահատկությունները:

Չորրորդ՝ **«Չճանաչված պետությունների կայացման առանձնահատկությունները և հեռանկարները. հետխորհրդային տարածքի քառյակը»** գլխում բացահայտվել են չճանաչված պետությունների կայացածության գնահատման առանձնահատկությունները և դժվարությունները, ինչպես նաև դիտարկվել են չճանաչված պետությունների կայացածության գնահատման հնարավորությունները: Մշակված «Խաղաղության ցուցչի» միջոցով գնահատվել են հետխորհրդային տարածքի չճանաչված պետությունների կայացման առանձնահատկությունները և հեռանկարների վերհանման նպատակով վերջիններիս կայացածության մակարդակները:

Չորրորդ գլխի առաջին ենթագլխում՝ վերնագրված **«Չճանաչված պետությունների կայացածության գնահատման հնարավորությունները և դժվարությունները»**, քննարկվել են ճանաչված պետությունների հետ մեկտեղ չճանաչված պետությունների կայացածության գնահատման նախաձեռնության շրջանակներում ի հայտ եկած խնդիրները: Դիտարկվել են արդեն գոյություն ունեցող ցուցիչներում առկա դյուրաբեկ կետերը, չճանաչված պետությունների գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվության պակասը, իսկ մի շարք դեպքերում՝ իսպառ բացակայությունը: Ներկայացվել են վիճակագրական տվյալների, գիտական հոդվածների, մենագրությունների և հրապարակումների սակավաթվության և հակասականության, փորձագիտական գնահատման և գնահատման չափորոշչի նույնությունը բոլոր պետությունների (և՛ ճանաչված, և՛ չճանաչված) համար ապահովման խնդիրները:

Երկրորդ՝ **«Չճանաչված պետությունների կայացածության գնահատման հեռանկարները. «Խաղաղության ցուցիչ»** ենթագլխում առաջարկվել է պետության կայացման սահմանում: Մշակվել է պետության կայացածության գնահատման ինտեգրալ մոդել, որը հնարավորություն է տվել մեկ մոդելի շրջանակներում իրականացնել և՛ ճանաչված, և՛ չճանաչված պետությունների կայացածության գնահատումը: Ներկայացվել են մոդելի նպատակն ու խնդիրները, գնահատման մեթոդաբանությունը: Մոդելը կազմավորելիս ներառվել են պետության կառուցումն ու կայացումը պայմանավորող բոլոր հիմնարար գործառույթները՝ շեշտը դնելով հենց պետության կայացածության համակողմանի ուսումնասիրության վրա՝ ներկայացված քաղաքական, տնտեսական, սոցիալական և անվտանգության ցուցիչների միջոցով: Ներկայացված են վերոնշյալ ցուցիչների ենթացուցիչների ընտրության հիմնավորումները և գնահատման օբյեկտիվությունն ապահովող հաշվարկման մեթոդաբանությունը: Ներկայացված է ցուցչի շրջանակներում մշակված գնահատման և արդյունքների մշակման փուլային եռաստիճան համակարգ հետևյալ փուլերով՝ 1. առանձին դեպքի ուսումնասիրություն, 2. կլաստերային վերլուծություն՝ ըստ տարածաշրջանների (տարածաշրջանում ընդգրկված և՛ ճանաչված, և՛ չճանաչված պետությունների համախումբը), նաև առանձին կլաստերային վերլուծություն միայն չճանաչված պետությունների շրջանակներում, 3. գլոբալ վերլուծություն: Ցուցչի շրջանակներում մշակվել է նաև պետության կայացածության գնահատման արդյունքների դիրքային վարկանիշավորման հնգաստիճան մեթոդաբանություն:

Չորրորդ գլխի երրորդ՝ **«Հետխորհրդային տարածքի չճանաչված պետությունների կայացածության գնահատումն ըստ Խաղաղության ցուցչի»** ենթագլխում գնահատվել է հետխորհրդային տարածքի չճանաչված պետությունների կայացածության մակարդակը պետության կայացածության չորս ոլորտների՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական և անվտանգության շրջանակներում: Գնահատման շրջանակներում շեշտադրվել են նաև այն հատկանիշները, որոնք առանցքային են միջազգային ճանաչում ստանալու տեսանկյունից, ինչպես նաև, հաշվի առնելով դիտարկվող դեպքերում միջազգային ճանաչման բացակայությունը և կոնֆլիկտային փուլի

առկայությունը, շեշտադրվել են նաև այն մարտահրավերները, որոնք կարող են ծագել հետկոնֆլիկտային փուլի առանձնահատկությունների և չճանաչված կարգավիճակի համատեքստում: Ներկայացվել է այդ ոլորտներից յուրաքանչյուրում հայտնաբերված առանցքային խնդիրները դիտարկվող չճանաչված պետություններում՝ Արցախում, Աբխազիայում, Հարավային Օսիայում և Մերձդնեստրում, ինչպես նաև «Խաղաղության ցուցչի» միջոցով հաշվարկված գնահատականները յուրաքանչյուր պետության համար

Եզրակացության մեջ ամփոփված են հետազոտության հիմնական արդյունքները, որոնցից հարկ է առանձնացնել հետևյալը.

1. Պետության կայացածության փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հաճախ հեղինակները պետության կայացածությունը սահմանելու համար օգտագործում են բավականին վիճարկելի հասկացություններ, երբեմն նաև այլաբանություններ, օգտագործում են հետազոտության ոչ բավականաչափ արդյունավետ գործիքներ կամ դրանք առհասարակ բացակայում են: Այդ մոտեցումը մեծ տարածում ունի ոչ միայն քաղաքական, այլև գիտական շրջանակներում, ինչը պայմանավորված է ոչ միայն խնդրի բարդությամբ, այլև այն պատճառով, որ դեռևս գոյություն չունեն պետության կայացածության գնահատման հստակ չափանիշներ, ինչն էլ իր հերթին հանգեցնում է այս կամ այն պետության «ուժի», «թուլության», կազմալուծվածության, գործունակության/անգործունակության մասին կամայական քաղաքական գնահատականների: Մոտեցումը թույլ չի տալիս օբյեկտիվորեն ուսումնասիրել պետության կայացածության երևույթը: Վերոնշյալ խնդրի լուծումն է պետության կայացածության գործընթացը համակողմանի ներկայացնող սահմանման առաջարկումը, որն է՝ պետության իր հիմնական գործառույթներն իրականացնելու, ինչպես նաև միջազգային հանրության լիիրավ անդամ դառնալու և իրավասուբյեկտության հատկանիշներով օժտված լինելու կարողություն:
2. Ազգերի ինքնորոշման իրավունքի կիրառմամբ ձևավորվող պետությունների ճանաչման գործընթացների ուսումնասիրությունը վկայում է, որ պետության բնականոն զարգացումը պետք է ընթանա հետևյալ փուլերով՝ անկախության հռչակում, ինստիտուցիոնալ և անվտանգային զարգացմանն ուղղված աշխատանք՝ պետության կառուցում, պետության միջազգային ճանաչում (անդամակցություն ՄԱԿ-ին) և պետության կայացում, որոնցից ամենատևականն ու ամենաբարդը երրորդն է՝ ճանաչումը, քանի որ սահմանափակ միջազգային շփումներ ունեցող երիտասարդ պետությունը պետք է կարողանա աջակցություն ստանալ այլ պետություններից: Այդ գործընթացների հիմնական բարդությունները պայմանավորված են այն բախումներով, որոնք առաջանում են իրավական և քաղաքական բաղադրիչների միջև՝ սկսած երրորդ փուլից: Մինչդեռ, քանի որ միջազգային իրավունքը լիարժեքորեն և հստակ սահմանում է ինքնորոշման իրավունքի ընդգրկումը (վերաբերում է բոլոր ժողովուրդներին), կարգավիճակը (միջազգային իրավունքի անվերապահ և համապարտադիր նորմ), բովանդակությունը (քաղաքական կարգավիճակի որոշում) և կիրառման

ձևերը (ինքնորոշվող ժողովրդի կամքի ազատ արտահայտմամբ ցանկացած՝ այդ թվում և անկախ պետության ստեղծում կամ միացում այլ անկախ պետության, քաղաքական կարգավիճակի ընտրություն),ապա յուրաքանչյուր դեպքում, երբ անկախության հռչակման գործընթացը համապատասխանում է միջազգային իրավունքի նորմերին, ճանաչումը չպետք է երկարատև ընթացք ունենա: ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն անդամ երկրների հիմնական պարտավորություններից մեկն է ինքնորոշման իրավունքի հարգումն ու բարեկամական հարաբերությունների ստեղծումը: Անգամ կամայական (քաղաքական) քվեարկությունը նոր պետության անդամակցության ժամանակ անդամ երկրներին չի ազատում կանոնադրությանը միանալու ժամանակ ստանձնած պարտավորությունների կատարումից:

3. Այդուհանդերձ, որոշ երկրներ, իսկ երբեմն նաև որոշ հետազոտողներ փորձում են դրանից խուսափել ազգերի ինքնորոշման իրավունքի «միտումնավոր» մեկնաբանումով՝ բացահայտորեն օգտագործելով «անվտանգությանը սպառնացող գործոնների արթնացման» քարոզչությանը բնորոշ կանոններ. «վտանգի տակ կդրվի փխրուն խաղաղությունը», «մարդկությունը կզրկվի բնականոն ու կայուն զարգացումից» և այլն: Մինչդեռ հենց խնդրի լուծման ձգձգումն է տասնամյակների ընթացքում պահպանում լարվածությունը և պատերազմի վերսկսման վտանգը տարածաշրջանում, էապես սահմանափակում օրինականորեն ինքնորոշված ժողովուրդների զարգացման հնարավորությունները և նորաստեղծ պետությունների կայացման հնարավորությունները: Միջազգային հարաբերությունների խիստ սահմանափակ պայմաններում նրանք սկսում են պետության կառուցման և կայացման գործընթացները այնպիսի մարտահրավերների առկայությամբ, ինչպիսիք են զինված հակամարտությունից հետո պետության վերակառուցումը և վերականգնումը, գլոբալիզացիայի խորացումը, իսկ հետխորհրդային պետությունների դեպքում դրանք համալրվում են նաև հետխորհրդային տրանսֆորմացիայի մարտահրավերներով: Մինչդեռ այդ պետություններն ունեն օգնության և աջակցության, այլ ոչ թե քաղաքական մանիպուլյացիաների կարիք:

4. Պետության բնականոն զարգացման երրորդ փուլի՝ պետության կայացածության խնդիրներն, ընդհանուր առմամբ, չափազանց բարդ են բոլոր պետությունների համար, սակայն խնդիրն ավելի բարդ է չճանաչված պետությունների դեպքում, քանի որ ճանաչված չլինելն ինքնին առաջ է բերում մարտահրավերների մի ամբողջ համախումբ պետության կայացածության բոլոր ոլորտների համար: Նույնիսկ այն պետությունները, որոնք արդեն ստացել են միջազգային ճանաչում (օրինակ, Հարավային Սուդան, Էրիթրեա և Արևելյան Թիմոր), դեռևս աչքի են ընկնում ծայրահեղ քաղաքական, տնտեսական և սոցիալական համակարգերի թերզարգացածությամբ: Չճանաչված պետություններն ավելի դժվարին իրավիճակում են, քանի որ վերջնական իրավական կարգավիճակի բացակայությունն այդ պետություններին մշտապես պահում է դյուրաբեկության և/կամ ձախողման սպառնալիքի տակ: Անկախ իրենց զարգացման հետագծից, միջազգային

հարաբերությունների սահմանափակվածությունը կամ բացակայությունը վաղ թե ուշ կհանգեցնի պետության կայացածության որևէ ոլորտի, իսկ հաճախ միանգամից մի քանի փոխկապակցված ոլորտների դյուրաբեկությանը՝ մեծացնելով հակամարտությունների վերսկսման վտանգն ու անկախություն հռչակած պետության բնակչության տառապանքները:

5. Իրավիճակի բարդությունն ավելի է մեծացնում այն հանգամանքը, որ այդ պետությունների վերջնական կարգավիճակի հարցի լուծմանն ուղղված գործընթացը, ինչպես արդեն նշվել է, տևում է տասնամյակներ՝ դրա վրա քաղաքական գործոնի մեծ ազդեցության հետևանքով, թեև իրավական տեսակետից որևէ խոչընդոտ չկա: Ավելին, կեղծ են տարբեր դիտարկումները, որ նման պետությունների վերջնական կարգավիճակի որոշման հետ կապված ձգձգումների պատճառն այն է, որ միջազգային իրավունքը թերի է կամ հակասական: Իրականում, ինչպես ինքնորոշման իրավունքի կիրառման հետ կապված կարգավորումներն են հստակ և սպառիչ, այնպես էլ Մոնտեվիդեոյի կոնվենցիայում ամրագրված չափանիշներն են ներդաշնակորեն համադրելի ինքնորոշման իրավունքի հետ: Ավելին, Մոնտեվիդեոյի կոնվենցիան նախանշում է այն ուղին, որը պետության հռչակումից տանում է դեպի ճանաչում:
6. Մոնտեվիդեոյի կոնվենցիայի հոդված 1-ում ամրագրված պետության իրավասուբյեկտությունը որոշող հատկանիշների Արցախի և Կոսովոյի դեպքերի շրջանակներում դիտարկումը վկայում է, որ անգամ մի շարք էական ընդհանրություններ ունեցող չճանաչված պետությունների կայացման արդյունքները կարող են էապես տարբերվել: Դա վկայում է, որ արտաքին գործոնների՝ մասնակի ճանաչվածություն և այլն, ազդեցությունը շատ ավելի փոքր է կառուցվող պետության որակների վրա, քան ներքին գործոններինն ու առանձնահատկություններինը: Հետևաբար, այդ պետությունների կայացման տեսակետից կարևոր նշանակություն ունի ներքին գործընթացների արդյունավետության մեծացմանը նպաստող միջոցների առկայությունը:
7. Պետության կայացման գործընթացի հիմքը հանդիսացող և վերջինիս ուղեգիծը կանխորոշող պետության կառուցման գործընթացն ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա ձևավորված պետություններում (հետկոնֆլիկտային փուլում) պետք է հիմնված լինի քաղաքական, տնտեսական և սոցիալական ինստիտուտների արդյունավետ գործունեության վրա: Պետք է հաշվի առնվեն նախակոնֆլիկտային ժառանգությունը, հակամարտության ընթացքի առանձնահատկությունները և նոր գործոնները, ինչպիսիք են՝ հետկոնֆլիկտային շրջանում նոր ձևավորվող կառավարության առաջ ծագող խնդիրները և մարտահրավերները: Միաժամանակ ծավալվող փոխկապակցված ներքին և արտաքին անցումային գործընթացները կարող են բարդացնել հետկոնֆլիկտային կարգավորումները: Խաղաղության ամրապնդումը, անվտանգության ապահովումը և պետության կառուցումը կախված են այդ անցումային գործընթացների ճիշտ կառավարումից:
8. Արդի գլոբալ զարգացումների համատեքստում պետության կառուցման գործընթացին ավելի մեծ ուշադրություն է հատկացվում, ինչը կարող է և՛

խթանել, և՛ խաթարել պետության կառուցման գործընթացը: Բարդությունները, որոնք ծագում են չճանաչված պետություններում պետական ներկայացվածության և հնարավորությունների սահմանափակ լինելու պատճառով, հանդիպում են այն ժամանակ, երբ քաղաքական կարգավորումները և առանցքային գործառույթները կենտրոնանում են մի շարք ոչ ֆորմալ կառույցների ներկայացուցիչների ձեռքերում: Ժամանակակից պայմաններն ու մարտահրավերներն իրենց խոր ազդեցությունն են ունեցել հակամարտությունների փուլով անցած և դեռևս չճանաչված պետությունների վրա: Հատկանշական է, որ այդ ազդեցությունը մեծ մասամբ բացասական է՝ կախվածություն արտաքին օգնությունից, ապրանքների ապօրինի արտահանում, երկրից կապիտալի դուրսբերումը հեշտացրած միջազգային դրամաշրջանառության ժամանակակից կառուցվածք, ինչպես նաև զինամթերքի համաշխարհային շուկայի հասանելիություն:

9. Հակամարտության փուլով անցած և դեռևս չճանաչված պետությունների համար անվտանգության ապահովումը սոսկ պետության հիմնական գործառույթ չէ, այլ ամենօրյա կենսական անհրաժեշտություն: Սակայն, ծավալուն և ինտենսիվ սպառազինումը ծախսատար է և բախվում է սպառազինման տեխնոլոգիաների շարունակական նորացման խնդրի հետ, ինչն էլ ավելի խնդրահարույց է սահմանափակ միջազգային հարաբերությունների պայմաններում: Դրա համադրումը ենթակառուցվածքների վերականգմանն ուղղված ոչ պակաս կարևոր և մեծածավալ ծախսերի հետ բարդ մարտահրավեր է տնտեսական զարգացման համար:
10. Չճանաչված պետությունների դեպքում ինքնիշխան պետականության կառուցման փորձի պակասն էականորեն դժվարացնում է ֆորմալ և ոչ ֆորմալ նորմերի ու փորձի համադրման գործընթացը: Խնդիրը բարդացնում է նաև այն փաստը, որ զինված հակամարտություններից հետո ձևավորված պետությունների դեպքում իշխանությունը կենտրոնացած է զինված խմբավորումների ղեկավարների ձեռքում, որոնք, սահմանադրության և համապատասխան օրենքների ընդունումից և դրանց հիման վրա կազմակերպված պատշաճ ընտրություններից հետո կառավարումը պետք է փոխանցեն օրինական իշխանությանը: Այդ խմբավորումների ղեկավարները, որպես կանոն, չեն ցանկանում դա անել:
11. Հետկոնֆլիկտային միջավայրում հասարակության թե՛ նորմատիվային, թե՛ իրական ակնկալիքները բավական սահմանափակ են. որպես կանոն, հասարակությունը պետությունը դիտարկում է որպես «անկարողունակ» կամ վերնախավի կողմից «սեփականաշնորհված» տիրույթ: Մարդու իրավունքների պարբերական խախտումները և խոցելի խմբերի (հատկապես էթնիկ փոքրամասնությունների՝ վառ օրինակ է Կոսովոն) հանդեպ ճնշումները չեն նպաստում իրավիճակի բարելավմանը:
12. Հետկոնֆլիկտային փուլում պետության կառուցման գործընթացն ավելի նկատելի է մայրաքաղաքներում, իսկ ծայրամասերի բնակչությունը, որպես

կանոն, ունի սահմանափակ կապ կենտրոնական իշխանության հետ: Խնդիրն ավելի է բարդացնում այն հանգամանքը, որ հաճախ մի շարք շրջաններում ոչ պաշտոնական կամ համայնքային կառավարման համակարգերը պետական ինստիտուտներից ավելի ակտիվ գործունեություն են ծավալում: Ու, թեև վերնախավը կարողանում է պահպանել իշխանությունն՝ օգտագործելով խոշոր գյուղական վայրերում տեղական առաջնորդների իշխանությունը, սակայն նման իրավիճակն ունենում է զգալի բացասական ազդեցությունը՝ դառնալով աղքատության և անապահովության գործոն բնակչության այդ հատվածի համար:

13. Դյուրաբեկությունը, հակամարտությունը և բռնությունը կարող են գոյություն ունենալ միաժամանակ՝ հանդիսանալով մեկմեկու թե՛ առաջացման պատճառ, թե՛ արդյունք: Ուստի, պետության կառուցման գործընթացը հաճախ զարգանում է խաղաղության ապահովման փոխգործակցության հարաբերությունների հետ զուգահեռ, որտեղ երկու գործընթացներին էլ նպաստում են ինչպես արտաքին, այնպես էլ ներքին մի շարք դերակատարներ, այդ թվում՝ զարգացող հասարակությունը:

14. Չճանաչված պետությունների կայացման խնդիրների և դրանցից բխող անվտանգության սպառնալիքների ուսումնասիրությունը հանգեցնում է միևնույն մեծ խնդրին՝ տվյալ պետություններին աջակցություն ցուցաբերելու դժվարություն: Վերջինս պայմանավորված է մի շարք հանգամանքներով՝ 1. գոյություն չունի համապատասխան մանդատ ունեցող պաշտոնական վերահսկողության մեխանիզմ, այսինքն՝ գործնականում անհնար է պարտադրել կայունացման և զարգացման ուղի այդ պետություններին: Արդյունքում տվյալ պետությունների իշխանությունները և/կամ ավելի հաճախ նրանց հովանավոր պետությունները կարող են այս կամ այն (երբեմն ոչ մի) խաղարարար կամ զարգացում երաշխավորող առաքելություններին պետություն մուտք գործելու թույլտվություն չտալու կամայական որոշում կայացնել: Վառ օրինակ է Վրաստանում ԵՄ մշտադիտարկման առաքելությունը, որը թույլտվություն չունի մուտ գործելու Աբխազիա և Հարավային Օսիա; 2. տեղական իշխանությունների համագործակցելու դժկամություն, քանի որ դա նրանց շահեկան չէ: Փոխարենը, նրանք օգտվում են չճանաչված կարգավիճակից և կայացածության դյուրաբեկ/ձախողված մակարդակից, հատկապես երբ գլոբալացման մի շարք ասպեկտներ տալիս են դրա համար բազմաթիվ հնարավորություններ; 3. «հովանավոր» պետության դժկամությունը փոխանցել իր հովանավորյալի նկատմամբ վերահսկողությունը: Եթե հովանավոր պետությունը կամ կազմակերպությունն իրապես ցանկանում է աջակցել՝ ըստ էության, իրագործելով իր «հովանավորի» առաքելությունը, ապա անում է հնարավորը աջակցելու համար պետության կառուցման և կայացման գործընթացներին, ընդ որում, հնարավորինս կարճ ժամանակահատվածում: Այնուամենայնիվ, խնդիրները սկսում են այն ժամանակ, երբ իրական աջակցության փոխարեն «հովանավոր» պետությունը մեծապես կենտրոնացած է սեփական

վերահսկողությունը և աշխարհաքաղաքական գերիշխանությունը հաստատելու վրա։

15. Տևական ժամանակահատված լուրջ մարտահարավերների առջև կանգնած պետությունների խնդիրների լուծման հնարավորությունները կարող են մեծանալ կայացածության գնահատման արդյունավետ մեխանիզմների մշակման միջոցով։ Առկա նման միջոցներն ունեն հատվածական բնույթ. դրանց համադրումը գործնականում անհնարին է տարբեր հայեցակարգերի, մոտեցումների և սկզբունքների կիրառմամբ դրանց ձևավորման պատճառով։ Առաջարկվում է ինտեգրալ ցուցիչի կիրառում, որը կապահովի ոչ միայն ինտեգրալ գնահատական՝ մեծացնելով պետությունների դասակարգման ճշգրտությունն, այլև միաժամանակ առանձին բաղադրիչների գնահատում՝ մատնացույց անելով այն ոլորտներն ու խնդիրները, որոնց պատճառով պետության դիրքը կարող է գնահատվել ոչ բավարար և որոնց ուղղությամբ հարկ է ջանքեր գործադրել՝ իրավիճակը բարելավելու նպատակով։

16. Պետությունների կայացածության գնահատման շրջանակներում ուսումնասիրությունը պետք է կենտրոնանա առկա և հնարավոր խնդիրների ու դրանց հիմքերի/սկզբնաղբյուրների բացահայտման վրա։ Այնուհետև, անհրաժեշտ է հայտնաբերել յուրաքանչյուր պետության դեպքում առանցքային հիմնախնդիրը, այն է՝ այսպես կոչված, «չարի առանցքը», որը հանդիսանում է մնացյալ խնդիրների փաստացի ելակետը։ Լավ կառավարման, զարգացման, կայունության և այլնի շուրջ համընդհանուր մոդելի պարտադրման փոխարեն հարկ է մշակել յուրահատուկ մոտեցում յուրաքանչյուր դեպքի համար։ Վառ օրինակ է Արևելյան Թիմորը, որտեղ ՄԱԿ-ի «ունիվերսալության» պարտադրումը հասցրեց Արևելյան Թիմորին գրեթե ձախողման հասնող պետության դյուրաբեկության մակարդակի։

17. «Խաղաղության ցուցիչն» առանձնացնում է հետխորհրդային տարածքի չճանաչված պետություններում հետևյալ առանցքային հիմնախնդիրները՝

- Աբխազիայի (գնահատական՝ 31 /ձախողման սպառնալիքի տակ/) և Հարավային Օսիայի (գնահատական՝ 25 /ձախողման սպառնալիքի տակ/) դեպքում առանցքային խնդիրն է օրեցօր պակասող ինքնիշխանությունն է, մասնավորապես բոլոր քաղաքական, տնտեսական, սոցիալական և անվտանգության գործընթացների վրա պակասող վերահսկողությունը, որն աստիճանաբար փոխանցվում է նրանց հովանավոր պետությանը՝ Ռուսաստանին։ Արդյունքում, ցանկացած աջակցության առաքելություն ենթակա է ձախողման, քանի որ գործնականորեն անհնար է օգնել որևէ պետության հաղթահարել որևէ խնդիր, երբ այդ նույն պետությունը զուգահեռաբար փոխանցում է իր պետական գործառույթները հովանավոր պետությանը։ Խնդիրն առավել բարդանում է այն համատեքստում, որ Աբխազիայի և Հարավային Օսիայի հովանավոր պետությունը հետաքրքված չէ բարեկեցության, կայունության, անվտանգության և այլնի ապահովմամբ, փոխարենը՝ շահագրգռված է այդ պետություններում իր վերահսկողության ապահովմամբ։ Ըստ էության, դա հանգեցնում է «արատավոր շրջանի» ստեղծման, որը գործնականորեն անհնար է դարձնում պետության

կայացածության որևէ ոլորտի բարելավումը, հետևապես իրավիճակի նույնը մնալու պարագայում չի լինի պետության կայացածության մակարդակի տեսանելի բարելավում: Այդուհանդերձ, վերոնշյալը հեշտ լուծելի խնդիր չէ, քանի որ թե՛ տեղական իշխանությունները, թե՛ հատկապես հովանավոր պետությունը խնդրահարույց չեն համարում ստեղծված իրավիճակը. ըստ էության, վերջինս ապահովում է իր վերահսկողությունը, իկ տեղական իշխանությունները վայելում են չճանաչված կարգավիճակի «առավելությունները» (իրենց համար) և հովանավոր պետության իրենց ապօրինի գործունեության և պետական ռեսուրսների յուրացման հարցում ամենաթողությունը, հետևաբար նրանցից ոչ մեկ թույլ չի տա խաթարել ստեղծված իրավիճակը: Հետևապես, ներկայումս միակ հասանելի լուծումը կարող է լինել ներքևից վերը քաղաքականության կիրառումը, այն է՝ այդ պետությունների հասարակություններին մարդու իրավունքների պաշտպանության, սոցիալական զարգացման, ինչպես նաև քաղաքացիական հասարակության զարգացման հարցերում աջակցության տրամադրումը: Հատկանշական է, որ այդ պետությունների հասարակությունները պարբերաբար բոյկոտում են Ռուսաստանին ներքին իրավասությունների ու վերահսկողության ավելի լայն շրջանակ փոխանցելը, ինչը զգալի հեշտացնում է հասարակություններին աջակցության գործընթացը և ավելացնում հաջողության հասնելու հավանականությունը:

- Մերձդնեստրի (գնահատական՝ 47 /ձախողման սպառնալիքի տակ/) դեպքում առանցքային հիմնախնդիրն է տնտեսական դյուրաբեկությունը, որի շուրջ խարսխվում և շարունակաբար խորանում են մնացյալ խնդիրները: Իրավիճակը հետևյալն է՝ տեղական իշխանությունները, բնավ, դեմ չեն չճանաչված կարգավիճակով պայմանավորված «առավելություններից» օգտվելուն, սակայն տնտեսական խնդիրների քանակն ու լրջությունն այնքան մեծ է, որ դրանց դիմակայելը նրանց համար իրական մարտահրավեր է դարձել՝ ստիպելով նրանց ցանկանալ լուծել խնդիրը: Տնտեսական ծայրահեղ դյուրաբեկության խնդիրը կարող էր լուծվել ԵՄ-Մոլդովա Ասոցացման համաձայնագրի կնքումից հետո, քանի որ Մերձդնեստրը, լինելով դե-յուրե Մոլդովայի մաս, սկսեց օգտվել դեպի ԵՄ մաքսատուրքերից ազատ արտահանումից: Հարկ է նշել, որ Մերդնեստրն ակնհայտ խանդավառություն ցուցաբերեց. պակասեցրեց դեպի ՌԴ և ավելացրեց դեպի ԵՄ արտահանումը, ինչն ակնառու ցուցիչ է, որ պետությունը շահագրգռված է որոնել նոր տնտեսական հնարավորություններ և լուծումներ, ինչպես նաև հնարավորության դեպքում ավելի հակված կլինի ԵՄ-ի հետ համագործակցության: Այնուամենայնիվ, առանցքային բառն է «հնարավորության դեպքում»-ը, քանի որ, ըստ էության, նրանք այդ հնարավորությունը դեռ չունեն. Ռուսաստանի ֆինանսական օգնության չափաբաժնի անկման պատճառով (Ռուսաստանի սեփական տնտեսական խնդիրների պառճառով) նրանք բախվեցին տնտեսական ճգնաժամի, ինչը ևս մեկ անգամ մատնանշում է, որ աջակցության

մեկնարկային կետը պետք է լինի տնտեսական համագործակցությունը: Այսպիսով, ԵՄ-ի հետ համագործակցության ավելի մեծ հակվածությունը, ինչը պարզ երևաց առաջին իսկ հնարավորության դեպքում, չնայած Ռուսաստանի հետ երկարատև կապերի առկայությանը, նոր դերակատարի՝ ԵՄ-ին նախապատվության տալուց, ինչը լավ հիմք է տնտեսական օժանդակության միջոցով պետության կայունության և զարգացման խթանմանը միտված նոր դերակատարի համար ժողովրդավարական արժեքների հաստատման, սոցիալական բարեկեցության և անվտանգության զարգացման համար:

- Արցախի (գնահատական՝ 83 /միջին մակարդակի կայացածություն/) դեպքում առանցքային հիմնախնդիրն է «սառեցված» պատերազմը, որը, սակայն, ուղեկցվում է սահմանային ամենօրյա լարվածությամբ՝ զինծառայողների և երբեմն նույնիսկ քաղաքացիական անձանց վիրավորվելու կամ մահվան մասին հաղորդումներով, հսկայական ֆինանսական ներդրումներով, հատկապես՝ սպառազինության անընդմեջ արդիականացման համատեքստում, ինչպես նաև լայնածավալ զինված հակամարտության վերսկսման մշտական վտանգի առկայությամբ: Այսպիսով, Արցախը գրանցում է լավ արդյունքներ քաղաքական և սոցիալական ոլորտներում (հատկապես չճանաչված պետության համար), սակայն պատերազմի վերսկսումը ոչ միայն կխարխլի այդ ոլորտների զարգացումը, այլև ցանկացած ոլորտում գրանցված հաջողություն: Միաժամանակ, պետությունը բախվում է խնդիրների տնտեսական ոլորտում, որոնք, չնայած դրանց լուծմանն ուղղված Արցախի կառավարության ջանքերի, դժվար լուծելի են. սպառազինության և տեխնիկայի արդիականացման շարունակական անհրաժեշտությունը և անվտանգության ոլորտին ուղղված մնացյալ ծախսերը կազմում են պետական բյուջեի և հովանավոր պետության ֆինանսական աջակցության նշանակալի չափաբաժինը, որը կարող էր ուղղվել պետության զարգացմանը: Տնտեսական խնդիրները պայմանավորված են նաև պետության չճանաչված կարգավիճակով և որպես դրա արդյունք միջազգային հարաբերությունների (այդ թվում՝ տնտեսական) սահմանափակվածությամբ, ինչը, սակայն, կրկին մասամբ հանգում է արդեն իսկ սահմանված խնդրին: Այսպիսով, կայունության հաստատումը, արդեն գրանցված լավ արդյունքների բարելավումը, պահպանումը և առկա խնդիրների հաղթահարումը հնարավոր է նշված առանցքային խնդրի լուծումից հետո: Թերևս, արդյունավետ մեկնարկային կետ կարող է լինել հակամարտության չլուծված լինելու համատեքստում հակամարտությունների կողմերին սպառազինության վաճառքի վրա արգելքը, ինչպես նաև Մինսկի խմբի շրջանակներում բախվող քաղաքականություն և շահեր ունեցող համանախագահների շրջանակի վերանայումը:

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ գիտական հոդվածներում.

1. Պետրոսյան Վ., Պատերազմից՝ խաղաղություն. պետության կառուցման առանձնահատկությունները հետկոնֆլիկտային միջավայրում, Հայկական քաղաքագիտական հանդես, 2(4), 2015, էջ 55-84:
2. Պետրոսյան Վ., Պատերազմից՝ կայացում: ԼՂՀ կայացածության գնահատումը, մարտահրավերները և հեռանկարները, «ԼՂՀ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու, ԱԵԳՄՄ, Երևան, 2016, էջ 213-219:
3. Պետրոսյան Վ., Ազգերի ինքնորոշման իրավունքի կիրառմամբ ձևավորվող պետությունների միջազգային ճանաչման երկսայրաբանությունները Հարավսլավիայի փլուզումից հետո, Հայկական քաղաքագիտական հանդես, 1(5), 2016, էջ 129-159:
4. Petrosyan V., From Conflict to Peace: The Issues of Post-Conflict Stateness as a Global Security Threat: The case of Non-Recognized States of Post-Soviet Space, Global Development and Security Studies Program. The Local Roots of Global Peace International Conference Proceedings, NT Holding, Yerevan, 2016, pp. 29-38.
5. Պետրոսյան Վ., Պետությունների միջազգային իրավասուբյեկտությունը որոշող հատկանիշները: Արցախի և Կոսովոյի դեպքը, «Շուշիի ազատագրման 25-ամյակին նվիրված» գիտաժողովի գիտական ընթերցումներ (հոդվածների ժողովածու), Արցախի պետական համալսարանի հրատարակչություն, Ստեփանակերտ, 2017, էջ 217-223.
6. Պետրոսյան Վ., Ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա ձևավորված պետությունների կայացման խնդիրն ու կապը միջազգային ճանաչման հետ, Հայկական քաղաքագիտական հանդես, 2(8), 2017, էջ 31-64:
7. Petrosyan V., Challenges and Perspectives of Post-Conflict Stateness: The Quartet of Post-Soviet Space, ԱրՊՀ գիտական ընթերցումներ (հոդվածների ժողովածու), Արցախի պետական համալսարանի հրատարակչություն, Ստեփանակերտ, 2018, էջ 306-310:
8. Manukyan V., The Challenges of Post-Conflict Stateness: The Case of Artsakh, Գիտական Արցախ, No 1, 2018, էջ 243-248:
9. Manukyan (Petrosyan) V., Non-Recognized States, Security Threats and Post Conflict 'Stateness': The Quartet of Post-Soviet Space, https://www.cife.eu/Ressources/FCK/Manukyan%2011.pdf, March 2020, pp. 1-15.
10. Manukyan V., Challenges and Perspectives of Stateness Assessment of Recognized and Non-Recognized States, «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», № 1 (31), 2020, էջ 69-83:

МАНУКЯН ВИОЛЕТТА СЕРГЕЕВНА

ОСОБЕННОСТИ И ПЕРСПЕКТИВЫ ГОСУДАРСТВЕННОЙ СОСТОЯТЕЛЬНОСТИ НЕПРИЗНАННЫХ ГОСУДАРСТВ ПОСТСОВЕТСКОГО ПРОСТРАНСТВА

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23.00.02 – “Политические институты и процессы, международные отношения”.
Защита состоится 20 ноября 2020г., в 13:30 часов, на заседании специализированного совета 056 "Политология” ВАК РА, действующего по адресу ул. А. Манукяна 1, 0025, г. Ереван, Республика Армения.

Резюме

Целью данной диссертационной работы является изучение возможностей и особенностей государственной состоятельности непризнанных государств, разработка модели для выявления проблем и перспектив государственной состоятельности последних.

В исследовании выявлены основные особенности и проблемы государственного строительства и государственной состоятельности в постконфликтной среде, а также при непризнанном статусе. На основе проведенного всестороннего анализа, в рамках исследования разработан интегральный индекс (Индекс Мира) - применимый для оценки государственной состоятельности как признанных, так и непризнанных государств. При помощи разработанного индекса представлены количественные и качественные оценки развития Абхазии, Южной Осетии, Приднестровья и Арцаха.

Диссертация состоит из введения, четырех глав, заключения и списка использованной литературы.

В первой главе - **“Характеристики и методы оценки государственной состоятельности”** - представлены проблемы недостаточной ясности понятия «государственной состоятельности», а также необходимость дальнейшей работы над его концептуально-функциональными формулировками. Анализ разнообразия взглядов на концепцию проводился методом кодирования - методом группировки отдельных компонентов исследования. Представлены особенности, недостатки и преимущества использования моделей оценки отдельных сфер государственной состоятельности и интегральных моделей оценки. Изучены проблемы и возможности использования вышеупомянутых методов оценки для расчета государственной состоятельности.

Во второй главе - **“Проблема государственной состоятельности государств основанных на праве народов на самоопределение и связь с международным признанием” –** был реализован анализ процессов государственной состоятельности и международного признания государств - связь последних или их отсутствие проводился по пошаговой логике. Анализ основан на том факте, что нормальная

эволюция каждого государства должна проходить по следующим этапам: провозглашение независимости, работа по институциональному развитию и развитию безопасности, государственное строительство, международное признание государства (членство в ООН) как обязательное условие для международного юридического лица государства, государственной состоятельность. Соответственно, исследование вопроса проводилось по следующим этапам: 1. рассмотрение правовых требований к международному признанию государств на основе принципа самоопределения народов по следующим 2 этапам: изучение статуса и содержания принципа самоопределения народов в современном международном праве, рассмотрение международных процессов признания государств на основе принципа самоопределения, изучение закрепленных в международном праве особенностей определения юридического лица государства; 2. изучение политического фактора международного признания государств на основе принципа самоопределения наций, в частности, учет влияния или отсутствия правовой составляющей признания при международном признании государств; 3. представление концепции государственной состоятельности и возможности ее оценки; 4. Рассмотрение связи или его отсутствия между государственной состоятельностью и признанием.

В третьей главе - **"Особенности государственного строительства в постконфликтной среде"** - рассматривается влияние постконфликтных особенностей на процесс государственного строительства. Эти особенности были разделены на четыре группы: последствия конфликта, проблемы постконфликтного этапа, отсутствие опыта и знаний построения суверенного государства и последствия непризнанного статуса. Проведено комплексное исследование вызовов, возникших в постконфликтный период, факторов, обусловивших построение государства, и особенностей влияющих на них. В главе рассматривается историческое и структурное наследие государственного строительства, вопросы государственного строительства в современной глобальной среде, а также основные факторы, определяющие процесс государственного строительства, и их особенности в постконфликтных регионах. Анализ каждого фактора сопровождается обзором возможных проявлений роли ключевых акторов, их влияния и отношений «центр-периферия».

В четвертой главе - **"Особенности и перспективы государственной состоятельности непризнанных государств: квартет постсоветского пространства"** - выявлены особенности и трудности оценки государственной состоятельности непризнанных государств, а также возможности оценки государственной состоятельности непризнанных государств. При помоши разработанного «Индекса Мира» была дана оценка особенностей становления непризнанных государств на постсоветском пространстве и уровней их государственной состоятельности с целью выявления перспектив.

THE PECULIARITIES AND PERSPECTIVES OF STATENESS OF NON-RECOGNIZED STATES OF POST-SOVIET SPACE

Dissertation under IG.00.02 – "Political Institutions and Processes, International Relations" aspiring to earn PhD in Political Science
The public defense will take place on November 20 at 13:30 at the Yerevan State University, at 056 "Political Science" HAC Specialized Chamber session (Address A. Manukyan str. 1, Yerevan 0025, Republic of Armenia)

Summary

The aim of the thesis is to study the possibilities and peculiarities of stateness of non-recognized states, to develop a model for identifing the challenges and perspectives of stateness.

The study reveals the main features and problems of state building and stateness in post-conflict environment, as well as in the circumstances of non-recognized status. Based on the carried out comprehensive analysis, an integral index (Peace Index) is developed - applicable to assess stateness of both recognized and non-recognized states. With the help of the developed index, the study represents the quantitative and qualitative assessments of stateness of Abkhazia, South Ossetia, Transnistria and Artsakh.

The thesis consists of introduction, four chapters, conclusion and bibliography.

The first chapter, entitled **"Characteristics and Assessment Methods of Stateness"**, presents the problems of insufficient clarity of the concept of "stateness", as well as the need for further work on its conceptual-functional formulations. It analysis the diversity of views on the concept by coding method - grouping the study components. The chapter presents the peculiarities, disadvantages and advantages of using models assessing separate fields and integral models of stateness assessment. At the same time the challenges and opportunities of using the above-mentioned stateness assessment methods have been studied.

The second chapter, entitled **"The Issues of States Emerged on the Right of Peoples to Self-Determination and its Connection to International Recognition"** introduces the analysis of the processes of stateness and international recognition, as well as their connection or its absence by step-wise logic. The analysis is based on the logics that the natural evolution of each state must proceed in the following stages: the declaration of independence, process directed to institutional and security development – state-building, international recognition of state (UN admission) – as a mandatory condition of international legal personality, and stateness process. Accordingly, the study of the problem was carried out in the following stages: 1. review of the legal requirements for international recognition of the states emerged on the principle of people's right to self- determination with the following 2 phases: study of the status, scope and content of people's right to self-determination principle in contemporary international law; consider the international recognition processes of states emerged on the people's right to self- determination principle, research of the requirements for

international legal personality defined in international law; 2. review of the political factor for international recognition of states emerged on the people's right to self-determination principle – in particular the study of the impact and/or the lack of the legal component on UN admission; 3. Presentation of the opportunities of stateness assessment; 4. review of the connection (or the lack of it) between stateness level and international recognition.

The third chapter, entitled **"The Features of Post-Conflict State-Building"** presents the influence of post-conflict features on the state-building process. These features are divided into four groups: consequneces of conflict, challenges of post-conflict phase, lack of experience and knowledge of building a sovereign state, and consequences of non-recognized status. A comprehensive study of the challenges of post-conflict phase, as well as the factors conditioning the state-building process and the peculiarities influencing them was carried out. The chapter reviews the historical and structural legacies of state-building, the issues of state-building in modern global environment, as well as the main factors conditioning the process of state-building and their features in post-conflict areas. The analysis of each factor is accompanied by the review of possible manifestations of key actors' role, their impact and "center-periphery" relations.

The fourth chapter, entitled **"The Pecularities and Perspectives of Stateness of Non-Recognized States: The Quartet of Post-Soviet Space"** reveals the features and challenges of stateness assessment, as well as reviews the opportunities of stateness assessment of non-recognized states. The chapter represents the assessment of stateness levels of non-recognized states of post-Soviet space with the help of the developed "Peace Index" – aiming at identifying the peculiarities and perspectives of their stateness.